ՍԵՎԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ
SEVAK GHAZARYAN

Պ. ՍԵՎԱԿԻ ԱՐԽԻՎԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԸ

Պ. Սևակի ողբերգական մահվանից ժամեր անց, փոքր-ինչ սթափվելով անակնկալ բոթից, նրա հարազատների և ընկերների առջև ծառացան մի քանի բարդ խնդիրներ. որտե՞ղ հուղարկավորել Սևակին ու նրա կնոջը՝ Ն. Մենաղարիշվիլիին, ո՞ւմ հետ պիտի ապրեն անչափահաս որդիները՝ Արմենն ու Կորյունը, ընտանիքը պիտի՞ տեղափոխվի նոր ստացված բնակարան... Խնդիրներ, որոնք շուտափույթ լուծում էին պահանջում և աստիճանաբար ստացան իրենց լուծումը:

Պ. Սևակը և նրա կինը հուղարկավորվեցին բանաստեղծի հայրենի գյուղում (Սովետաշեն, ներկայումս Զանգակատուն), որդիների խնամակալը դարձավ Սևակի առաջին կինը՝ Մայա Ավագյանը: Երկընտրանք-մտորումներից հետո որոշվում է իրագործել նաև Սևակի ցանկությունը՝ տեղափոխվել նոր ստացված բնակարան հինը՝ Կասյան 3 հասցեի բնակարանը, հանձնելով պատկից հարևան-ընկերոջը՝ Արիզ Ավագյանին:

Մինչ գույքը, զրադարանն ու արխիվը նոր բնակարան տեղափոխելը, նախին բնակարանը դատարկ չէր մնում. որևէ մեկը հերթապահում էր այնտեղ (Սևակի ավագ որդին՝ Հրաչյան, քրոջ որդին՝ Հրահատ Լևոնյանը, հարազատները՝ Ալբերտ Արիստակեսյանը և Աշոտ Խաչատրյանը): Այդպիսի հերթապահություններից մեկի ժամանակ նախաճաշելու դուրս եկած և շուտով վերադարձած Ալ. Արիստակեսյանը տագնապ է բարձրացնում. նրան թվացել էր, որ օտար մարդիկ են մուտք գործել բնակարան, ձեռք տվել Սևակի թղթերին (թղթապանակներից մեկը տեղում չէր եղել): Իրարանցում է սկսվում, վիլլիցիա՞ են կանչում, բայց... տագնապը մտացածին էր. զտնվում է թղթապանակը, ապացուցվում, որ ոչ ոք աննկատ ներս մտնել չէր կարող: Ըստ երևույթին Ալ. Արիստակեսյանի նյարդերը տեղի էին տվել. զգացել էր տվել և վիշտն ու հոգնությունը, և լարվածությունն ու ԿԳԲ-ի դավերի հանդեպ հետագայում նս ունեցած վախը: Տագնապը փարատվում է կարծես, բայց և նստվածք տալիս. այս պահից սկսած Պ.Սևակի արխիվի պահպանման վայրը ու տնօրինման խնդիրը նրա ժառանգների միջև դառնում է տարաձայնության առարկա:

Շուտով, 1971թ. հուլիսին արխիվի մեծ մասը (ձեռագիր ու մեքենագիր) Կասյան 3-ի բնակարանից (նաև գյուղի տնից) ստվարաթղթե արկղերով տեղափոխվում են Մայա Ավագյանի բնակարան, ուր մշտապես մարդ կար և ուր ժամանակավորապես (մինչև նոր ստացած բնակարանը կարգի բերվեր) հանգրվանել էին նաև Սնակի անչափահաս զավակները: Այսպես, արխիվը մի քանի ամիս մնում է այստեղ:

1971թ. սեպտեմբերին կայացվում է ՀՍՍՀ Միհիստրների սովետի Պ. Սնակի հիշատակը հավերժացնելու մասին որոշումը, համաձայն որի պիտի տպագրվեր նաև Պ. Սնակի երկերի ժողովածուն:

Ժողովածուն կազմելու գործը հանձնարարվում է Ալ. Արիստակեսյանին, և բանաստեղծի արխիվը հանձնվում է նրան առանց թեկուզ թռուցիկ ուսումնասիրման, առանց գոնե մոտավոր ցուցակի: 1972-76թթ. տպագրվում է Պ. Սնակի ժողովածուն վեց հատորով, ընդ որում վերջին, 6-րդ հատորում ամփոփվում են Պ. Սնակի արխիվից քաղված հիմնականում անտիպ ստեղծագործությունները (հեղինակի կենդանության օրոք չհրատարակված որոշ գործեր զետեղվում են նաև նախորդ հատորներում): Ժողովածուն կազմելուն զուգահեռ Ալ. Արիստակեսյանը, հաճախ օգտագործելով նաև արխիվային անտիպ նյութը, գրում և հրատարակում է «Պարույր Սնակ» մենաբրժեք մենագրությունը (տե՛ս Արիստակեսյան Ալ., Պարույր Սնակ: - Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1974:):

Երկերի ժողովածուի հրատարակումից հետո էլ, սակայն, Սնակի արխիվը մնում է Ալ. Արիստակեսյանի մոտ:

Ալ. Արիստակեսյանի մահվանից անմիջապես հետո, 1979 թվականին, Մայա Ավագյանը և Պ. Սնակի միջնեկ որդին Արմեն Ղազարյանը, մի քանի ամիս ուսումնասիրում են արխիվը, ցուցակագրում-նկարագրում են եղածը, դասդասում ըստ բաժինների ավելի մանրակրկիտ գիտական ուսումնասիրությունը թողնելով հետագային: Պ. Սնակի ժառանգների փոխադարձ համաձայնությամբ արխիվը դարձյալ մնում է Ալ. Արիստակեսյանի բնակարանում և միայն 1991 թվականին տեղափոխվում է Ա. Ղազարյանի տուն: Այդ ժամանակվանից ցայսօր արխիվը նա է տնօրինում:

Արխիվը ընդգրկում է Պ.Սնակի գործունեության բոլոր բնագավառները, դրանց առնչվող բազմազան նյութեր:

Իր ստեղծագործության, գրած ամեն մի տողի նկատմամբ այդքան պահանջկոտ ու բծախնդիր Պ. Սնակը զարմանալիորեն հաճախ նույնքան անփույթ է եղել իր արխիվի հանդեպ: Ավելի հավաք և ամբողջական պահպանվել են վաղ շրջանի նյութերը սկսած ուսանողական տարիների մշակումներից և բանաստեղծական փորձերից, մինչև 1950-ական թվականների առաջին կեսի արդեն հասուն ստեղծագործությունները (պոեզիա,

արձակ, գրականագիտություն)։ Այս նյութերը (և՛ տպագրվածները, և՛ ձեռագիր կամ մեքենագիր անտիպները) ամփոփված են առանձին տետրերում, մատյաններում կամ հավաք ու միաչափ թղթերում։

Հայտնի է, որ Սևակի վաղ շրջանի գործերը (հիմնականում պոեզիան) եղել են (և կան) նաև ուրիշների (ընկերների, մեծավորների) ձեռքին, բայց դրանք հիմնականում կրկնօրինակված են արխիվում պահպանված ինքնագիր-բնագրից կամ արխիվում ունեն իրենց կրկնօրինակը։ Այսպես, 1985 թվականին հրատարակված «Մուտք» ժողովածուում զետեղված են նաև մինչ այդ անտիպ բանաստեղծություններ. դրանք կազմողին Հովհաննես Ղազարյանին տրամադրել են տարբեր մարդիկ (ոչ Սևակի ժառանգները) կամ եղել են հենց իր մոտ, սակայն այդ բանաստեղծությունների մեծ մասի ինքնագիր-բնագիրն առկա է արխիվում։ Ուրեմն՝ բանաստեղծը դրանք տվել է կարդալու, կարծիքի, գնահատելու, բայց ոչ թե տվել ու մոռացել է կամ պարզապես նվիրել։

Նույնը նաև 1960-ական թվականներին։ Բայց այս տարիներին այլոց տված ձեռագրերը (նաև մեքենագիր օրինակները) հաճախ չէին վերադարձվում զիտակցաբար... արդեն մեծ էր բանաստեղծի հոչակը։

Երբեմն Պ. Սևակը իր ձեռագրերը նաև նվիրում էր իր մտերիմներին։ Այսպես, «Անլռելի զանգակատուն»-ը արտագրել ու նվիրել է Գրիգոր Խանջյանին, իսկ «Եռաձայն պատարագ»-ի ինքնագիրը առանց արտագրելու մյուս նկարիչ ընկերոջը՝ Սարգիս Մուրադյանին։ Պ. Սևակի այս «սովորությունը» շահարկել են շատերը՝ նրա ձեռագրերը (նաև մեքենագիր օրինակները) պարզապես յուրացնելով ու նրա մահվանից հետո հրատարակելով՝ չունենալով դրա իրավական, ո՛չ էլ բարոյական իրավունքը (օրինակ «Անցյալը ներկայացած»-ի և «Եռաձայն պատարագ»-ի մեքենագիր նախնական տարբերակները, բազմաթիվ բանաստեղծություններ)։

Այս դեպքում, սակայն, նույնպես պետք է ասել՝ չկա հրատարակած որևէ տեքստ, որ այս կամ այն ձևով (սնագիր, մաքրագիր, մեքենագիր) պահպանված չլինի Պ. Սևակի արխիվում։ Իսկ եթե «հայտնվի» այդպիսի «նվիրատվություն», ուրեմն այն պարզապես գողացվել է բանաստեղծի տնից (ի դեպ Պ. Սևակի հարազատները փաստում են, թե նա բազմիցս խոսել է տնից անհետացած որոշ ձեռագրերի և այդ անհայտացման իր վարկած-կասկածների մասին)։

1950-ական թվականներից (մոսկովյան տարիներ) Պ. Սևակը շատ հաճախ սկսում է գործածել բլոկնոտներ, նոթատետրեր։

Ինչպես խոստովանում է ինքը Սևակը՝ բլոկնոտ գործածելու օգտակարությունը նրան հուշել է մեծավորներից մեկը։ Այսուհետ բլոկնոտը (հիմնականում փոքր չափսի, գրպանում տեղադրվող) դառնում է Պ. Սևակի

մշտական ուղեկիցը, ուր զրաՀվում են բազմաբնույթ ու բազմագան բաներ՝ ասույթ, սրամիտ խոսք, փաստական տվյալ, հուշի պատառիկ, ինչ-որ տեղից քաղված միտք, բանաստեղծություն և բանաստեղծական տող... մի խոսքով ամեն ինչ: Շուտով բլոկնոտը հաճախ պարզապես փոխարինում է սովորական թղթին:

Բլոկնոտները երբեմն թեմատիկ բնույթի են (թեմատիկ նշումներ, բանաստեղծությունների և արձակի սնագրություններ, մշակումներ, պլան-կոնսպեկտներ), երբեմն նաև վերնագրված են: Հետագայում Պ. Սնակը բլոկնոտներից զտում հանում էր իր համար արժեքավորը, մաքրագրում-արտագրում մատյաններում կամ միաչափ թղթերում, նաև մեքենագրում: Այսպես են ստեղծվել երկու տանյակի հասնող ձեռագիր մատյանները (բանաստեղծություններ, պոեմներ, թարգմանություններ): Բայց բլոկնոտներից շատերը (և դա պարզորոշ երևում է) հեղինակային «մշակման» ենթարկված չեն և սպասում են իրենց հետազոտողին: Պ. Սնակի արխիվում պահպանվել են հարյուրավոր այդպիսի բլոկնոտներ:

Արխիվում մեծ ծավալ են կազմում Պ. Սնակի ստեղծագործությունների մեքենագիր օրինակները հեղինակի շտկումներով ու խմբագրմամբ: Եվ հենց այստեղ նրա անտարբերությունն ու անփութությունը պարզապես զարմանք է հարուցում: Մեքենագիր վերջնական տարբերակի հակառակ, մաքուր երեսին նա կարող էր սնագրություն սկսել կամ թույլ տալ երեխաներին նկարելու դրանց վրա: Սա է պատճառը, որ բանասիրական-տեքստաբանական ճշգրտման համար այդքան անհրաժեշտ մեքենագիր վերջնական տարբերակը արխիվում հաճախ չի պահպանվել (օրինակ՝ չկան «Անցյալը ներկայացած»-ի, «Եռաձայն պատարագ»-ի մեքենագիր վերջնական օրինակները): Շատ բան, ցավոք, ամենայն հավանականությամբ անդարձ կորել է:

Անխաթար և ամբողջական են պահպանվել Սնակի գրականագիտական մեքենագիր տեքստերի օրինակները (և՛ տպագրվածները, և՛ անտիպները):

Արխիվի ծավալուն մաս է կազմում նամականին, որ նույնպես քիչ է ուսումնասիրված: Պահպանվել են տարբեր ժամանակներում ծանոթ և անծանոթ, նշանավոր և ոչ անվանի մարդկանց Սնակին գրված հարյուրավոր նամակներ: Նամականին հարստացել է նաև Սնակի մահվանից հետո. Սնակի իրենց հասցեագրած նամակները (ձեռագիր կամ մեքենագրված) շատերը նվիրել են բանաստեղծի որդուն Ա. Ղազարյանին (հատկապես արժեքավոր են Մ. Ավագյանին, Գր. Չալիկյանին, Ս. Բաբայանին Սնակի գրած նամակները, որոնց մեծ մասն անտիպ են ցայժմ):

Արխիվային նյութերը մեծապես հարստացել են Սևակի ժառանգների, հատկապես Ա. Ղազարյանի հավաքչական աշխատանքի շնորհիվ: Հավաքվել են ձեռագիր մասունքներ, հոդվածներ, հրապարակումներ, հուշեր, լուսանկարներ և այլ նյութեր:

Պ.Սևակի արխիվը, անշուշտ, միայն նրա ժառանգների սեփականությունը չէ և վաղ թե ուշ բաց է լինելու բոլորի համար, բայց միայն որոշակի գիտական ուսումնասիրությունից հետո:

Այդպիսի լուրջ ուսումնասիրությունն արդեն սկսված է:

Paruyr Sevak's archives history and present state

The first part of the article deals with the history of the archives after Paruyr Sevak's death, supplying the following details: why and how the archives were temporarily preserved by Paruyr Sevak's first wife M. Avagyan, and then, by specialist in literature A. Aristakesyan. The son of Sevak – A. Ghazaryan has taken charge of the archives since 1991.

The second part of the article refers to the history and the content of the archives. The facts of the article are presented to readers for the first time.